ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/50 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

(Կոտայքի մարզի Գետարգել համայնքի «Ռուս-հայկական մարդասիրական արձագանքման կենտրոնի տարածքում 0.4կՎտ մալուխային և լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ)

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ ԳՊ/ԳԱՊ գնահատման պատասխանատու

Հովիկ Պողոսյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության շենքերի, շինությունների պահպանման բաժնի պետ

Անդամներ՝ ԳՊ/ԳԱ գնահատող անձնակազմ

Արմենուհի Մկոյան՝ ԱԻՆ ֆինանսատնտեսագիտական վարչության ֆինանսաբյուջետային բաժնի պետ.

Նորայր Կարապետյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության շենքերի, շինությունների պահպանման բաժնի գլխավոր մասնագետ.

Անդամներ՝ ԳՊ/ԲԱ – բացող անձնակազմ

Տիգրան Ալեքսանյան՝ ԱԻՆ խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող.

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

20.08.2019թ.

1. Ընդունել ի գիտություն.

1.1 ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /Կարգ/ 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել «ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/50» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ «Էփրան» ՍՊ ընկերության՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից ստացվել է եզրակացություն, համաձայն որի «Էփրան ՍՊԸ-ն ունի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով գնային առաջարկի մեկ տոկոսը գերազանցող ժամկետանց պարտավորություն /կցվում է/:

2.2 Սահմանված ժամկետում՝ 19.08.2019թ. «Էփրան» ՍՊԸ կողմից ներկայացվել են միայն թիվ 3, 3.1, 3.2 հավելվածները. բացակայում են հավելվածներին կից, հիմնավորող փաստաթղթերը:

3. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով Կարգի 47-րդ կետով՝ նիստը կասեցնել 3 աշխատանքային օրով՝ մինչև 23.08.2019թ. ժամը 12.00-ն, ծանուցել «Էփրան» ՍՊԸ-ին՝ առաջարկելով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

22.08.2019թ.

4. Ընդունել ի գիտություն.

Սահմանված ժամկետում առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը շտկել է արձանագրված անհամապատասխանությունը. ներկայացրել է հավելվածներին կից հրավերով պահանջվող որակավորման փաստաթղթերը, ինչպես նաև հարկային պարտավորությունը մարված լինելը հավաստող փաստաթղթերը: Ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

5.1 Ղեկավարվելով Կարգի 48-րդ կետով՝ «Էփրան» ՍՊԸ կողմից ներկայացված հայտը գնահատել բավարար և ճանաչել ընտրված մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0

5.2 Հաստատել ԳՀԱՇՁԲ-ԱԻՆ-19/50 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է):

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Հ. Պողոսյան

անդամներ՝ _____ Ա. Մկոյան

_____ Ն. Կարապետյան

_____ Տ. Ալեքսանյան

_____ Հ. Ծատուրյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան